

Անտրուսիկ Տախշա

Գլագոկից ինձ էր նայում համառությամբ լցված մեծահասակ կնկա մի գույգ աչք: Չնայած, որ չեմ սիրում անծանոթ մարդկանց առաջ դուռ բացել, բայց սա մի նենց պլշված էր նայում դռանս ու նենց հաստատակամությամբ էր կանգնած, որ ուզեի-չուզեի պիտի դուռը բացեի: Բացել ու պինդ կանգնել եմ դռան վրա՝ հասկացնելով, որ ներս թողալու ոչ մի մտադրություն չունեն: Սա թքած ունի վրես ու ասում ա. «Կարելի ա՞»:

Սաղ խնդիրն էլ էն ա, որ դիմացիս հարևանի տան դուռը վաղ գարնանից սկսած բացվում ու տհենց էլ չի փակվում մինչև ուշ աշուն: Ու իրանց դուռը միշտ բաց ա, ինչպես հյուրանոցի դուռը տուրիստի առաջ, ու իրանց կալիդորում միշտ լիքը ժողովուրդ կա: Նենց որ, հենց մեկը դռանս մոտիկ ա գալիս, անկախ էն հանգամանքից՝ իրանք էդ պահին կալիդորում են, թե՛ ոչ, պարտադիր տան ծակուծուկերից դուրս են թռնում, որ ֆիքսեն, թե ով ա մոտիկանում դռանս:

Հազար անգամ դռանս մոտիկանալուց, երբ աչքի պոչով տեսել եմ, որ դռանց կալիդորում մարդ չկա ու թեթևացած բանալին մտցրել եմ զամոկից ներս, աչքիս պոչով միամիտ տեսել եմ դռանց տան անկյուններից երկարացած մի մեկի վիզը կամ էլ կիսատ-պռատ դեմքը:

Ֆիքսվեց: Տղա չի դուռ ծեծողը: Երագում են յարիս հետ բռնցնեն, էն էլ չի ստացվում: Հա պլստում եմ հարևաններիս չափազանց հետաքրքրասեր ու հարցախույզ հայացքներից: Ստեղ են ասել. չկա չարիք, առանց բարիքի: Ախպերս ասում ա. «Ձրի պահակ ունես. էլ ի՞նչ ես ուզում»: Մտածում եմ, որ լափ էլ ճիշտ ա ախպերս: Էս շրջապատում սաղ էլ գիտեն, որ էդ տան դուռն առավոտից գիշեր բաց ա, ու՞մ մտքով կանցնի մոտիկանա դռանս: Սիգնալիզացիան տեղում կմիանա: Հա՛, էլի: Լրիվ սիգնալիզացիա են:

Վերջը: Դուռը կիսաբացելով ասում եմ, թե դու ով ես՞ այ կնիկ, որ քեզ չեմ ճանաչում, ու դու էլ ուզում ես խցկվես իմ ամրոցը, որտեղ օձն իր պորտով, հավքն իր թևքով չի մտել դեռ: Սա դուռը բրդում ու առաջ ա գալիս, թե՛ բան ունեն ասելու: Ես զարմանքից դաժե չեմ էլ կարենում թե կատաղեմ, էնքան որ զարմացել եմ սրա պրկերեսության վրա: Վերջը տեսա, որ չէ, ախպեր ջան, էս կնիկը ուզում ա խցկվի ներս, դիմացիս հարևաններն էլ ձենները կտրել ու դառել են մի մեծ ականջ, ասի, լավ, տենամ ի՞նչ ունի սա ասելու. հո ինձ չի՞ բռնաբարելու:

Կիսաբաց դռնից ներս խցկված կնկան դեմ տվի դռանս վրա՝ արդեն ներսի կողմից ու սպասողական հայացքով հարցնում եմ, թե՞ բան ունես ասելու՝ ասա: Սա տեսնելով, որ ներս չեմ հրավիրում, վռագ-վռագ վրա ա տալիս.

-Ես ձեր դիմացի շենքի՝ քո բալկոնին նայող հարևանն եմ: Էկել եմ ասեմ՝ տան մեջ տրուսիկով որ ման ես գալիս, դիմացի շենքից էրևում ա:

Մի խոսքով: Դե կուխնին էլ իմ ամենասիրած տեղերից մեկն ա տան մեջ, ոչ իհարկե էն պատճառով, որ էփել-թափել սիրող աղջիկ եմ: Ոչ, իհարկե՛: Կակաոզ հակառակը: Այլ նրա համար, որ ուղղակի սիրում եմ կուխնիում նստել: Ուղղակի: Քեփս տիենց ա ուզում: Համ էլ որ ներս ես մտնում՝ պիտի գնաս կուխնի չէ՞, որ մի այլան ուտես կամ սարքես:

Դե, ես, սկզբունքորեն, մտածել էի, որ կարող ա դիմացի շենքից էրևա, որ տրուսիկով եմ ման գալիս, բայց ինչքան որ կուխնիում եմ էղել, աչքս զցել եմ դիմացիս շենք՝ աչքովս մարդ- մուրդ չի ընկել, ես էլ արխայնացել եմ: Սաղ հարցն էն ա, որ դիմացիս շենքը իմ շենքին տուտուզ ա արել, այսինքն իմ տան կուխնին նայում ա էդ շենքի սպալնյաներին, իսկ ցերեկով, երբ որ ամենաշատն եմ լինում էդ մասում, սովորաբար մարդ չի ըլնում, համենայն դեպս ես մարդ չեմ տեսել: Դե սպալնյաներում էլ մարդիկ, սովորաբար հայտնվում են գիշերվա կողմ:

Մի խոսքով, էս կնիկը մինչև վերջ չի խոսում: Դե ես էլ շատ հարցասեր մարդ եմ ու պիտի ջոկեմ ինչը ոնց ու ինչից հետո: Կամացից սրան հարց ու փորձ եմ անում, թե երբ կամ ինչ ուրիշ մանրամասներ ա տեսել: Դե սրտումս ուրիշ կասկածներ կան, որի մասին հենց հիմի պատրաստվում եմ գրեմ, ու հենց էդ պահին ուզում եմ ճշտվեմ, թե հո՞ սրտիս կասկածները ճիշտ չեն: Պարզվեց՝ ճիշտ են:

Ուրեմն, սրան խաչածն հարցեր եմ տալիս, թե ցերեկով երևում ա՞ որ տան մեջ տրուսիկով եմ ման գալիս: Որովհետև, ախր, սա ինձ ասում ա, թե կանաչ սրբիչը կոնքերիս փաթած ա տեսել, բայց ներս մտնելուց էլ ասեց, թե տրուսիկով ա տեսել: Դե տան մեջ եմ տրուսիկով ման գալիս, բայց որ բալկոն եմ դուրս գալիս՝ էդ կանաչ սրբիչը փաթթում եմ վրես: Ու հենց էդ նպատակով էլ էդ սրբիչը ըտեղ դրած ա, որ բալկոն դուրս գամ՝ փաթաթվեմ: Ու ստե մտածում եմ, որ մի այլան ստե նի տո ա: Ու ստե կասկածի որդը սիրտս կրծում ա:

Ու մի խոսակցություն եմ բացել, կոֆե այլան եմ դրել, գիլազ եմ հյուրասիրում ու խոսացնում եմ: Բայց պառավս ափերիստ պառավ ա ու չի խոսում:

Մենակ կրկնում ա, որ ինձ ուզում ա ասի, թե ես աղջիկ եմ(ստե ես մտածում եմ, թե դու որտեղի՞ց գիտես, թե աղջիկ եմ, այ պառավ), ու իմ համար լավ չի էլի, որ դիմացի շենքից ինձ տան մեջ տրուսիկով ման գալուց տենան: Պատկերացրեք էլի, իմիջիս մասին մտածողներ ունեն: Բա՞:

Բայց վերջը էս պառավի խոսալու ու նայելու տոնից զգում եմ, որ չէ՛, ախպեր ջան, սա ինձ կակաոզ հենց անտրուսիկ ա տեսել, ոչ թե տրուսիկով: Ուղղակի դուխը չի հերիքում պոյամո ճակատիս ասի: Եզրակացությունն անում եմ ընդեղից, որ սա խոսքի մեջ, երբ ուզում եմ ճշտվեմ, թե տան որ մասում ա ինձ տեսել տրուսիկով ման գալուց, սա ասում ա, թե ցերեկով տան ներսը չի էրևում, ուրեմն սա ինձ ո՞նց կարող ա ցերեկով՝ տրուսիկը հագիս տեսած լինի: Ու ստե եզրակացնում եմ, որ տրուսիկով ման գալս՝ աչքս խոթելով հասկացնում ա, թե հենց անտրուսիկ ա տեսել:

Գիշերները, երբ ամեն ինչ՝ այդ թվում և տրուսիկը, հանում ու գցում են լրիվ տարբեր կողմերով, մեկ-մեկ պատահում աս, որ ծարավում ու տենց դիփ տկլոր թռնում են կուխնի՝ ջուր խմելու: Ու քանի որ տանձիս չի, թե դիմացումս շենք կա, գալի ու կուխնու լույսերը լրիվ վառած, էթում ու խալադելնիկի դուռը բացում՝ ջուր են խմում: Դե դիմացի շենքից էլ պարզ էրևում աս: Սա էլ էղած-չեղածս տեսել աս: Ու էդ մտքի վրա սավսեմ կատաղում են, թե դու ի՞նչ գործ ունես այ՛, պառավ, աչքերդ գցում ես ուրիշների տան մեջ ու հերիք չի էղած-չեղածս տեսել ես, մի հատ էլ յանի լավություն ես անում, թե զգուշացնում են:

Ու էդ մտքի վրա, որ էդ պառավը էղած չեղածս տեսել աս, վերջնականապես կատաղեցի: Ու սա էլ կողից կրակի վրա յուղ աս լցնում, թե շատ մարդ չի տեսել, մեկ էլ իրա պատկից բիծեն աս տեսել: Այ, քեզ պատմություն: Թամաշա աս, էլի՛: Բայց սավսեմ բորբոքվեցի էն պահի վրա, որ էս կնիկն ասում աս, թե ինքը երկար-բարակ գցում-բռնում էր գա ասի, թե չէ, ու որպես իրա գալու արդարացման փաստարկ բերում աս էն, որ ծանոթ մարդ չի ունեցել իմ շենքում, թե չէ ինքը չէր գա, այլ էդ ծանոթին կասեր, որ ինձ փոխանցի:

Ստե ֆազերս զցի ու արդեն հալալուց թռա դեմքին, թե այ կնիկ խելքդ զցել ես՞. «էդ ինչ փոխանցելու այա՞ն աս: Գլխով ես մտածում, թե ոնց՞»: Պատկերացնում եք՞ ինչ-որ մեկին տհենց այան ասես, սաղ բերնե-բերան, դռնե-դուռ պիտի տարածվի, թե Տաիշն անտրուսիկ տան մեջ ման աս գալիս:

Ու ստե չդիմացա ու բորբոքվեցի, թե. «Ես. իմ տունն ու իմ էղած-չեղածը: Ձեր ին՞չ գործ. ես իմ տան մեջ պալտոյով ման կգամ, անտրուսի՞կ, թե՛ կանաչ սրբիչով»:

-Ես էլ իմ լավությունը,- վրա աս տալիս էս կնիկն ու ես էդ պահին չգիտեմ խի ֆիքսվում են սրա սև-սև խոշոր ուզրիներով ամբողջությամբ պատված քթին: Ջզվում են ուզրիներից: Մանավանդ երբ որ դրանք մեծ են լինում ու տարիքով: Ես դրանց տարիքն էլ են կարում որոշեն: Մարդկային մաշկից մի ուրիշ տեսակի զզվում են ու չափազանց զգայուն են մաշկի սանիտարական վիճակի նկատմամբ:

-Չէ՛, ես շատ էլ շնորհակալ եմ, որ ինձ ասեցիք, ուղղակի իմ ներվայնանալը նրա վրա աս գալիս, թե ուրիշների ինչ գործն աս էդ՞,- կայնածս տեղից պատասխանում են ես, որ ամբողջ ժամանակ տհենց էլ չնստեցի ու ներվայնացած ստե-ընդե են էթում-գալիս ու չեն կարում, որ պառավիս հետ հանգիստ նստեմ ու զրից անեմ:

Ու իսկականից էլ շնորհակալ եմ, որովհետև հենց էդ պահին են ջոկում, որ ահավոր մի այան աս տեղի ունեցել: Ո՞նց են կարեցել տհենց այանի մասին չմտածել, կամ էլ ականջի հետև զցել: Հը՞: Մտածում ու ոչ մի տրամաբանական բացատրություն չեն կարում գտնեն: Հետո հասկացա, որ էդ մասին ուղղակի չեն մտածել ու վերջ: Ես, որ ուրիշների կյանքով չեմ հետաքրքրվում, էդ ուրիշներն իմ համար զոյություն չունեն: Օրինակ, ես որ նման բան տեսած լինեի, հազար տարի մնա՛ չէի էթա ասեի: Կարող աս մարդն ասեր. «Ես, իմ տունն ու իմ տրուսիկը: Ո՞վ ես դու, որ ասես, թե տանս մեջ ոնց ման գամ»:

Ու էս կնիկը խոսքի մեջ սկսել ա իրա կյանքից պատմել ու ուզում ա հասկացնի, որ լավ մտքով ա ասել: Որ ես ջահել աղջիկ եմ, որ ջահել աղջկա համար հեչ լավ չի տհենց վիճակով իրան տենան: Ու էդ ոճի մեջ մի կես ժամվա խոսակցություն, որի ընթացքում ինքը պատմում ա իրա կյանքն ու էն մոտիվացիան, թե ինչն ա իրան դրդել էր բանն անելու:

Պարզվում ա, որ սա մենակ ա մնում: Մարդը մեռել ա, ու ինչ որ պսակված տղերք ունի ռուսաստաններում, ինքն էլ մենակ ա մնում: Ուրեմն իմ գալուց առաջ, էս տանը մի հատ ադինոչնի բիծա ա մնացել ու էս կնիկն էլ տարիքով իրան լրիվ հարմար ա էղել: Դե բիծեն էլ սաղ օրը էդ բալկոնում տնկված ու էս կնկան տոչկելիս ա էղել: Պարզվում ա, որ էս կնիկը գիշերով, որ հանկարծ էկել ու իրա սպալնյայի լույսը վառել ա, էս բիծեն էդ խալադելնիկի վառած լույսը ընկալել ա որպես իշմար, թե՛ յար իմ ծոց: Բիծես էլ գնացել ա: Պառավս գիշերվա կեսին էս բիծուն տեսել ու ֆազերը գցել ա: Դուռը, բնականաբար, չի բացել: Հետո բազար-վակզալ, շենքի հայաթում գտնվող մի կոշկարարի միջոցով: Բիծես էս կոշկակարին ասել ա. «թե որ չէ՞ր ուզում. խի է՞ր սպալնյայի լույսը հա վառում. իշմա՞ր էր տալիս»:

Ու հիմի, էս կնիկն ասում ա, թե գիտի մենակ ապրելու դադրը, ու, որ իմ համար ա ասում: Ու ես ստեղ նորից կատաղեցի, թե դու ի՞նչ գիտես, այ պառավ, ես մենակ եմ ապրում, թե ոնց՞: Ու ընդհանրապես, քո ինչ գործն ա, ես մենա՞կ եմ ապրում, թե՞ յարիս հետ: Կամ, ընդհանրապես, ձեր ի՞նչ գործն ա ուրիշ մարդկանց կյանքով հետաքրքրվելը: Այ, քե՛ պյան: Չէ՛: Տախի վերջը անապատն ա: Աչքիս:

Ու ստե ինքն ասում ա, որ երկարատև ուսումնասիրության արդյունքում, որ ենթարկել ա վարքս, ջոկել ա, որ ես վատ աղջիկ չեմ, ուղղակի չեմ պատկերացնում, թե ինչքան փիս բան եմ արել, ու հիմի ինքը՝ քանի որ էդ հարցում փորձ ունի, էկել ա զգուշացնի կյանքի խութերի մասին, որ տես. Տախ աղջիկ. սհենց- սհենց վատ պյաներ էլ են ըլնում կյանքում: Յանի, որ դու գիշերները անտրուսիկ տան մեջ ման ես գալիս, կարող ա էդ դու մտքովդ ուրիշ բան չես անցկացնում, բայց դրսից տենողը կմտածի, թե էս աղջիկը իշմար ա տալիս, թե՛ յար իմ ծոց:

Ու ձեռի հետ էլ ճշտվում ա, թե ինչ եմ աշխատում եմ: Մինչև պատասխանելս, ասում ա իրա կարծիքը, որ կազմել ա մասինս՝ դիմացի շենքի 5-րդ հարկի բալկոնից բալկոն արած իրա ուսումնասիրության արդյունքում: Պարզվում ա, պառավս ինձ գործակատարի տեղ ա դրել:

Ու հլը, սաղ հեչ: Սա իմ հյուրասիրած գիլազը չի ուտում, մենակ դատարկ կոֆեն ա խմում, ու ձեռի հետ էլ նաստիրնի ինձ հրավիրում ա իրա տուն՝ հարևանություն անելու: Պարզվում ա, որ պառավս թքած ունի իմիջիս վրա, ու էդ հանգամանքն իրա համար ընդամենը պրիչին էր, որ իրա կարճ խելքով ինքն օգտագործել ա հետս շփվելու եզր գտնելու համար:

Փաստորեն, պառավս մտածել ա մի ձեռով էրկու ձմերուկ բռնի: Ինքը մտածել ա, թե մենակ աղջիկ ա, գործակատար, սուսիկ-փուսիկ, տունը մարդ չի տանում- բերում, բռնեմ՝ հետը հարևանություն անեմ: Ինքն էլ դե մենակ պառավ ա, հարևաններին

էդքան էլ չի հավանում, որովհետև իրա հարևանները տրադիցիոն հայկական հարևաններ են, որ ապրում են իրանց հարևանների կյանքով, ու եթե թույլ տաս, նաև՝ իրանց տանը:

Ու տանը մենակ ապրող պառավին իրա հարևանները դուր չեն էկել ու սա որոշել ա դիստանցիա պահի, բայց դե լրիվ մենակությունն էլ մի այլան չի, ու սա երկար գցել-բռնելուց հետո՝ որոշել ա հետս շփվի:

Ու ստե աչքերս կլորանում են զարմանքից, թե, այ քե պառավ, ի՞նչ էլ ռաշչոտներ ունես բայց դու: Տո Տաիշն ու՞մ հետ ա ղայդին շփվում, որ քո հետ շփվի. էն էլ իրա տան մեջ:

Ստեղ ես իրան ասում եմ, որ հա՛, անպայման կգամ, բայց մտքումս պասլատ եմ անում: Չնայած մի կողմից էլ մտածում եմ, որ լավ ա արել պառավս, որ ասել ա: Ու տենց: Սրան մի կերպ ճամփու դրի: Ասում եմ մի կերպ, որովհետև անընդհատ հարց ու փորձ էր անում կյանքիցս, մերոնցից ու ստից-ընդից ու ոչ մի կերպ չէր ուզում էթար: Տո, ո՞վ ես դու, կես ժամ առաջ ծանոթացած մի մեկ, որ ուզում ես իմանաս, թե որտեղից ա գալիս Տաիշն ու ու՞ր ա էթում:

Դիմացիս հարևանները տհենց էլ չիմացան, թե խի էր էկել էս կնիկը:

Պառավի էթալուց հետո սկսեցին մղձավանջները: Ամեն կուխնի էթալուց լարվում էի: Ու արդեն լրիվ ջոկել էի, որ դիմացս շենք կա ու էդ կնկան էլ չափազանց հաճախ տենում էի բալկոնում տնկված՝ իմ յանի վրա կանչող հայացքներ գցելուց: Ջալիս զանավեսկեն, որ կուխնու հետ ընդհանուր ա, դիտմամբ կարճ էի արել, որ կուխնու դուռը չծածկի: Որովհետև առանց էդ էլ բալկոնի վրա կապած կրիշը մթնացնում ա կուխնին, ու կուխնու համար բոյեց բոյ ապակիով դուռ էի զակազ տվել, որ էդ դռնից լույս ընկնի ներս: Հաջորդ օրը բերի ու կուխնու դռան վրա մի հատ զանավեսկա հագցրի ու ամեն անգամ էս կնկան տենալուց ներս էի մտնում ու ցուցադրաբար զանավեսկեն քաշում, որ ջոկի, թե ցանկություն չունեն հետը շփվելու:

Ամառը տհենց լարված էլ անցավ: Ամեն դուրս գալուց ավտոմատ աչքս ընկնում էր էդ բալկոնին: Ու հանգիստ չէի կարում հելնեի բալկոն: Երկար ժամանակ մտածեցի, որ կարելի ա բալկոնիս քիվերը մի տեսակ մատերիալով փակեմ. լրիվ բաց ա, բայց տհենց էլ գլխի տակ չդրի: Օրվա մեծ մասը տանը չեմ: Համ էլ, ախր, սաղ հարցն էն ա, որ էդ յանի բալկոնները հիմնականում փակած են, ու ընդհանրապես էդ յանի վրա շատ ելունուտ չի լինում, դրա համար էլ հանգիստ եմ եղել, իսկ էս մի յանից շենքիս դիմացը շենք չկա ու հանգիստ կարելի ա տկլոր ֆռֆռալ:

Ամառից հետո ծմեռ եկավ: Ոնց որ կարգն ա: Հետո նորից ամառ էր: Էս կնկան էլի սկսեցի բալկոնում տեսնել: Արդեն էլ իմ յանը յավնի չի նայում: Երևի ջոկել ա, որ իրա տուն էթացողը չեմ: Կանաչ սրբիչն այլևս վերացավ գալի բազկաթռից ու գնաց հանգրվանելու բաղնիքի կախիչների վրա:

Երկար մտածեցի, թե ոնց պիտի լինի հալը: Ձեռս ընկավ մինչև ոտերիս կոճերը հասնող պլեչիկներով մի շոր, որի մատերիալը շատ թեթև ա ու մաշկիս նեղություն չի

տալիս: Մկրատը տվի ու կտրեցի: Քաշեցի հագս ու հասկացա, որ քիչ մը վերևից եմ կտրել: Ծնկներիցս վերև: Նկատի ունեմ: Բալկոնում մի քիչ լավ որ կռանում եմ՝ տակից սաղ էղած-չեղածս երևում ա: Տանձիս: Էս տարի էլ մի էրկու կիլո չաղացել եմ, շորի փեշերն ավելի վեր են թռել: Տանձիս: